ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am
Հաշվետվություն թիվ 09, 02.07.2018թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝	բաժնետոմս,	պարտատոմս	պարտատոմս
արժեթղթերի քանակը՝	1,760,731 հատ,	140,000 հատ	920,000 հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	5,000 ՀՀ դրամ,	10,000 ՀՀ դրամ	25 ԱՄՆ դոլար

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ Բաց Բաժնետիրական Ընկերության արժեկտրոնային պարտատոմսերը ապացուցակելու և առևտուրը պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում դադարեցնելու մասին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի Գլխավոր տնօրենի 2018 թվականի հունիսի 27-ի թիվ ՑՊ-015-06/18 որոշում («ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի Գլխավոր տնօրենի որոշումը կցվում է):

NASDAQ OMX

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

27 հունիսի 2018 թվականի N ՑՊ-015-06/18
ք. Երևան

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ԱՊԱՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐԸ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ (Bbond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Օպերատոր) «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 21-րդ գլխի 107 կետի 5) ենթակետի, ինչպես նաև ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 36 ամիս շրջանառելիության ժամկետով, տարեկան 7.25% անվանական տոկոսադրույքով, արժեկտրոնային, 80,000 (ութսուն հազար) հատ անվանական պարտատոմսերի (ARBKB9) շրջանառության ժամկետը լրանալու հանգամանքը և Օպերատորի «Բորսայական ծառայությունների դեպարտամենտի» կողմից 2018 թվականի հունիսի 26-ին ներկայացված եզրակացությունը,

Ղեկավարվելով Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 107 կետի 5) ենթակետի և Օպերատորի Կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի զ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 36 ամիս շրջանառելիության ժամկետով, տարեկան 7.25% անվանական տոկոսադրույքով, արժեկտրոնային, 80,000 (ութսուն հազար) հատ անվանական պարտատոմսերը, որոնց շնորհվել է AMARBKB29ER0 ծածկագիրը և ARBKB9 հապավումը, ապացուցակել և առևտուրը դադարեցնել պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում, ինչպես նաև դադարեցնել դրանցով հասցեական և ռեպո գործաքներ կնքելու թույլտվությունը:
2. Հանձնարարել «Բորսայական ծառայությունների դեպարտամենտ»-ին՝ սույն որոշման ընդունման օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Ընկերությանը և 1 աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին Առևտրային համակարգի միջոցով տեղեկացնել Շուկայի մասնակիցներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**

«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ • ՀՀ, Երևան 0010, Մհեր Մկրտչյան 5բ • www.nasdaqomx.am
հեռ.՝ +374 10 543 321 • ֆաքս՝ +374 10 543 321 լր 135 • էլ. փոստ՝ info@nasdaqomx.am